14
ՄԱՅԻՍԻ
2020

Luys Լույս®

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՈՒՄ

“Politics is no longer just theater – it’s show business. So let’s put on the best show in town”
«Քաղաքականությունը այլևս միայն թատրոն չէ, այլ շոու բիզնես: Ուրեմն, եկեք բեմադրենք քաղաքի ամենալավ շոուն»
“House of Cards” series by Netflix, S4, E8

Քաղաքականության թատերականացումը ենթադրում է քաղաքական հաղորդակցություն թատերական տեխնոլոգիաների միջոցով: Որպես պատվիրատու կարող է հանդես գալ պետությունը կամ առանձին առաջնորդը: «Հաղորդագրությունը» կարող է կոչ անել սատարելու կոնկրետ առաջնորդի, կարծիք պարտադրել կամ թելադրել որոշակի հիմնախնդրի վերաբերյալ կամ դրդել որոշակի գործողությունների: Սակայն, հաճախ նմանօրինակ տեխնոլոգիաները կիրառվում են հասարակության ուշադրությունը շեղելու համար: Տեղեկատվության կրողը անհրաժեշտ տեղեկատվությունը հասցնում է սպառողներին: Որպես կրիչ կարող են հանդես գալ ԶԼՄ-ները, ազդեցիկ հասարակական-քաղաքական գործիչները, «*ծաղրածուները*», իսկ տեղեկատվությունը սպառողը լայն զանգվածներն են: Այս երևույթի գործիքակազմի կիրառումը հնարավորություն կտա բացատրելու մեր շուրջը և աշխարհի մի շարք երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացները:

Համաձայն Մ. Կաստելսի տերմինաբանության՝ համացանցային հաղորդակցության միջոցները ինտերակտիվ հասարակության սոցիոտեխնոլոգիական հիմքն են. միջավայր, որտեղ տեղեկատվությունը փոխանցվում է մի օգտատերից մյուսին, կյանքի է կոչում նոր՝ իրական վիրտուալության-ցանցայնության մշակույթ: Մարդկանց մատերիալիստական գոյաբանությունը ամբողջությամբ պարփակված է վիրտուալ կերպարներում, մտացածին աշխարհում: Նմանօրինակ մոտեցման դեպքում սոցիալական մեդիա հարթակը իրական վիրտուալության-ցանցայնության կրիչն է[1]:

[1] Кастельс М., Информационная эпоха: Экономика, общество и культура /пер. с англ. под науч. ред. О. И. Шкаратана; Гос. ун-т. Высш. шк. экономики. – М., 2000. – 606 с.

Անհրաժեշտ է գիտակցել, որ սոցիալական մեդիան տարբերվում է ավանդականից: Հիմնական տարբերությունը նրանում է, որ օգտատերերը այլևս միայն տեղեկատվության սպառող չեն, այլև՝ բովանդակություն ձևավորող: Մեր դիտարկմամբ, սոցիալական մեդիայի կայացումը և զարգացումը փոխկապակցված է հասարակության մեջ ընթացող կառնավալային (դիմակահանդես) գործընթացներով: Տեղեկատվությունը այլևս մատուցվում է ոչ ֆորմալ ձևով՝ վերածելով գործընթացի բոլոր մասնակիցներին լիարժեք ակտորների, ձևավորելով կոմունիկացիոն առանձնահատուկ լեզու՝ «ծաղրական-ծիծաղաշարժ ֆոնի» առկայությամբ. Այս բոլորը ժամանակակից սոցիալական մեդիայի ու կառնավալի անբաժանելի մասն են: Ու. Էկոն գրում էր. «Արդի հասարակության բնութագրիչներից մեկը կյանքի ամբողջական կառնավալացումն է... Մենք խեղդվում ենք տոտալ կառնավալի հորձանուտում[2]»:

Բացատրենք կառնավալի էությունը: Ըստ Մ. Բախտինի՝ կառնավալը գերակա մշակույթի լրացումն է, որն իրականացնում է իրական արժեքների փոշիացում: Հիերարխիկ համակարգը փոփոխություններ է կրում, որտեղ կառնավալային աշխարհընկալմանը հատուկ տրամաբանությամբ ստորին ու վերին հատվածները փոխվում են դերերով: Կառնավալին բնորոշ է համաժողովրդական աշխարհընկալումը, որը հիմնված է հարաբերական ուրախության վրա և հակադրվում է վախից ծնվող իրական մռայլ լրջությանը: Սոցիոլոգիայի տեսանկյունից կառնավալի էությունը իշխանական համակարգին դիմակայելու և հասարակական հարաբերությունները հաշտեցնելու, ներդաշնակեցնելու մեջ է: Բացի վերոհիշյալից, համաձայն Ժ. Բաթայի, կառնավալային գործընթացները ժողովրդավարական հասարակության անքակտելի մասն են[3]:

Կառնավալին բնորոշ է մարդկանց միջև ազատ, անմիջական շփումը (հասարակական կյանքը կանոնակարգող բոլոր օրենքները կառնավալի ընթացքում չեղարկվում են, գրեթե նրանց ամբողջությամբ հակառակ են սկսում գործել՝ կառնավալի վերբալ և ոչ վերբալ լեզուներին հատուկ որոշակի սանձարձակությամբ): Այլ կերպ ասած՝ կառնավալի գործիքակազմի կիրառմամբ կարելի է ջարդել թե՛ գրված օրենքները, թե՛ չգրվածները՝ տաբուները: Վերջինս շատ ավելի կարևոր է այս պարագայում:

[2] Эко У., Полный назад! «Горячие войны» и популизм в СМИ / пер. с итал. Е. Костюкович.– М.: Эксмо, 2007. – 592 с.
[3] Батай Ж., Проклятая часть. Сакральная социология.- М., 2006, 366 с.

Կառնավալը օգնում է կյանքի կոչել, ազատականացնել մարդկանց ցանկությունները (ի տարբերություն առօրյայի՝ կառնավալի մասնակիցները ունեն էքսցենտրիկ, ազատ, անբարո վարքագիծ): Կառնավալի կարևորագույն բաղադրիչ է կառնավալային ծիծաղի առկայությունը, որի նպատակը բարձրագույնն է՝ իշխանությունը. ծիծաղի, կատակի տեսքով կարելի է քննարկել այն ամենը, ինչը լուրջ քննարկել արգելված է: Կառնավալի թերևս ամենահետաքրքիր ֆենոմենը կրկնօրինակումն է, որը ենթադրում է վերացականությունը չեզոքացնող նմանակի ստեղծում, ինչը արտահայտում է ոչ թե մերժում, այլ տեսլականի փոփոխություն: Կառնավալի ընթացքում տեղի է ունենում հեղինակության կերտում և հետագայում իշխանությունից զրկում, ինչը սույն գործընթացի գլխավոր միջոցառումն է. հենց այստեղ են արտահայտվում կառնավալի բնորոշիչ գծերը՝ տաբուի խախտում, պրոֆանացիա[4], ծիծաղ, կրկնօրինակում[5]:

Ճգնաժամային փուլերը ակտիվացնում են մշակութային ինքնաճանաչման ու դրա հոգևոր-իմաստային կորիզի վերարժևորման գործընթացները: Դրանով պայմանավորված՝ համընդհանուր կառնավալիզացիան, մշակույթի ճգնաժամային փուլի արդյունք լինելով, ներառում է հսկայական կերպափոխման պոտենցիալ, ինչը հնարավորություն է տալիս վերաիմաստավորելու սոցիալական, քաղաքական, տնտեսական, պատմական գործընթացները: Ըստ Ժ. Բոդրիյարի՝ զանգվածներին հատուկ է հիպերկոմֆորմիզմը, կատակային տրամադրվածությունը, ինչը հնարավորություն է տալիս կառնավալային տարրերին գոյատևելու զանգվածային մշակույթի պայմաններում: Կառնավալը պոստմոդեռնիստական աշխարհում հասարակության կայացման գործընթացն է, իսկ կարևորագույն իրադարձությունները ամփոփված են ծիծաղի փիլիսոփայության մեջ:

Կառնավալը սոցիալական մեդիայի հարթակում մի շարք գործառույթներ է իրականացնում, որոնցից կառանձնացնենք ամենակարևորները: Առաջինը *կոմպենսատորային գործառույթն* է, որի հիմնական էությունը կայանում է նրանում, որ ներդաշնակում է մարդկային հարաբերությունները՝ պատրանքային կերպով իջեցնելով հեղինակությունները՝ հասարակ մարդկանց սիմվոլիկ մեծարմանը զուգահեռ: Եթե միջնադարյան կառնավալներում վերոշարադրյալը իրականացվում էր հանդերձանքի ու դիմախաղի միջոցով, ապա սոցիալական մեդիահարթակում

[4] Պրոֆանացիա՝ խեղում, բարոյալքում, անմիտ գործողություններով որևէ երևույթի խեղաթյուրում, վիրավորական անհարգալից վերաբերմունք որևէ երևույթի նկատմամբ:
[5] Бахтин М.М., Творчество Франсуа Рабле и народная культура Средневековья и Ренессанса. – М., 1965

օգտատերերի գործիքակազմը ավելի ընդարձակ է: Նույն կառնավալային տրամաբանությամբ թատերաբեմում են տարբեր դերակատարներ՝ թագավորից մինչև թագավորական ծաղրածու, որին վերապահված է առավել պատասխանատու՝ հասարակությանը զբաղեցնելու, ապակողմնորոշելու, ժամանակավորապես ուշադրությունը սեփական անձի վրա սևեռելու կարևորագույն դերը:

Ըստ էության՝ իշխանությունը մանիպուլացնում է հասարակությանը, ինչը քաղաքական գիտակցության սահմանափակման ու նվազեցման գործընթաց է, քաղաքական ցանկալի մտածողության կուլտիվացում, որոնք ղեկավարող օղակները կարող են հասցնել ամուր պատկերացումների և հավատալիքների մակարդակի: Մանիպուլյացիան ազդում է էմոցիոնալ, ենթագիտակցական մակարդակում, այդ պատճառով մանիպուլյատիվ տեխնոլոգիաները, օրինակ՝ նույն քաղաքական խեղկատակի կատեգորիան, առավել հաջող աշխատում է ցածր քաղաքական ու քաղաքացիական ինքություն ու ինքնագիտակցություն ունեցող հասարակություններում, որտեղ հասարակությանը անընդհատ պետք է մատուցել տեսարաններ:

Քաղաքական մանիպուլյացիաները առավել հաճախ կիրառվում են քաղաքական-գաղափարական ճգնաժամերի, հասարակական դեզինտեգրացիայի ու դրանով պայմանավորված՝ քաղաքացու օտարման պայմաններում, երբ շարունակական ճգնաժամերի արդյունքում առաջանում է անկայունություն: Կառնավալային տրամաբանության համաձայն՝ հասարակության ուշադրությունը շեղելու և զբաղեցնելու համար սոցիալական մեդիահարթակ են նետվում վիրուսային արագությամբ տարածվող նյութեր, որոնք, արթնացնելով իրարամերժ էմոցիաներ, գրավում են հասարակության ուշադրությունը: Վիրուսային տեսանյութերը լինում են հիմնականում խեղկատակային կամ խորապես էմոցիոնալ: Վերջիններս, շոշափելով հասարակության համար սակրալ և զգայուն թեմաներ, առաջացնում են քննարկումների մեծ ալիք՝ լցնելով մեդիահարթակը և կատարելով իրենց հիմնական գործառույթը. հասարակությունը առժամանակ մոռանում է քաղաքական գործընթացների մասին: Նմանօրինակ գործիքակազմի կիրառում կարող է դիտարկվել 2020 թվականի գարնանը նոր կորոնավարակի հետ կապված ճգնաժամի ժամանակ «Ֆեյսբուք» սոցիալական կայքի հայկական սեգմենտում լայնորեն քննարկվող «Joni Brjoni» օգտատերը, որն իր ուղիղ եթերների միջոցով ահռելի ուշադրություն գրավեց: Այդ օրերին, երբ բոլորի ուշադրությունը համավարակի տարածման և դրա հետևանքների վրա էր, նմանօրինակ «ուշադրության շեղումը»

խիստ տեղին էր: Առկա են տեսագրություններ, որտեղ երևում է, որ օգտատերը մինչև ուղիղ եթեր մտնելը ցուցումներ և ճշտումներ է ստանում հեռախոսակապի միջոցով:

Կառնավալային տեխնիկայի կիրառման օրինակ է նաև քաղաքացու նկատմամբ ընդգծված, հաճախ նաև արհեստական հոգածության տիրաժավորումը: Նման դեպքերում կոմունիկացիոն հաղորդագրությունը կայանում է նրանում, որ շարքային քաղաքացին գտնվում է պետության ուշադրության կենտրոնում: Դա հաճախ իրականացվում է հստակ անձի՝ քաղաքացու կամ հասարակության որևէ շերտի հավաքական կերպարի՝ մեկ սոցիալական կամ հուզական համատեքստում գտնվող խնդրի լուծմամբ: Ընդ որում, որպես կանոն՝ խնդիրը լուծվում է ոչ թե ինստիտուցիոնալ, այլ կետային, անհատական տրամաբանությամբ: Որպես օրինակ՝ կարող է դիտարկվել 2020 թվականի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր Արտուշ Միրզոյանի այցելության կազմակերպումը:

Օրինակ՝ Ադրբեջանում իշխանական խեղկատակի դերը կատարում է բլոգեր Աթա Աբդուլլաևը: Նրա գործունեությունը չի սահմանափակվում համացանցով: Նա հայտնի է նաև ադրբեջանական ընդդիմության ցույցերը խափանելով ու ընդդիմադիրներին հակաքարոզչությամբ: Աբդուլլաևի գործունեության ամենացայտուն օրինակներից է Բաքվում տեղի ունեցած ցույցերից մեկի ընթացքում յուրօրինակ կերպով ուշադրությունը «շեղելու» հմտությունը. հարց ուղղելով «Ադրբեջանի ազգային ճակատ» ընդդիմադիր կուսակցության ղեկավար Ալի Քերիմլիին՝ որդու Լոնդոնում ուսանելու վերաբերյալ, միաժամանակ զուգահեռներ անցկացրեց Ի. Ալիևի հետ, որի որդին, ի տարբերություն ընդդիմության առաջնորդի որդու, ծառայում է բանակում: Աբդուլլաևը ակտիվ գործունեություն է վարում նաև համացանցում՝ ձայնագրելով քաղաքական գործիչներին ուղղված ուղերձներ, անցկացնելով հարցումներ: Աթա Աբդուլլաևի իշխանամետ գործունեությամբ պայմանավորված՝ Ադրբեջանում համոզված են, որ վերջինս ֆինանսավորվում է անմիջապես իշխանության կողմից՝ նախագահի գաղափարախոսության և քարոզչության հարցերով օգնական Ալի Հասանովի հովանու ներքո:

Մյուս հետաքրքիր օրինակը դիտարկենք Ուկրաինայում: «Ժողովրդի ծառա» կատակերգության գլխավոր դերակատար Վլադիմիր Զելենսկին ընտրվեց Ուկրաինայի նախագահ, որից հետո ՌԴ ԱԳՆ մամուլի խոսնակ Մարիա Զախարովան մեղադրեց Վ. Զելենսկուն՝ կատակերգությունը նախընտրական արշավի ընթացքում օգտագործելու և դրա հաշվին ձայներ հավաքելու համար: «Ժողովրդի ծառան»

երգիծանքի ձևով ներկայացնում է Ուկրաինայում տիրող քաղաքական իրավիճակը[6]: Ըստ սյուժեի՝ գլխավոր հերոսը, որը պատմության ուսուցիչ է, հիասթափված երկրում տիրող ամենաթողությամբ ու կոռուպցիայի մակարդակով, էմոցիոնալ մենախոսություն է անում, ձայնագրությունը հայտնվում է համացանցում և հեղինակը հայտնի է դառնում, ինչից հետո աշակերտների խնդրանքով առաջադրում է իր թեկնածությունը և հաղթում նախագահական ընտրություններում: Ըստ կատակերգության՝ նախագահ է դառնում ժողովրդի հասարակ ներկայացուցիչը: Հատկանշական է, որ «Ժողովրդի ծառա» կատակերգության երրորդ եթերաշրջանը հեռարձակվեց ընտրարշավի ժամանակ, ինչը որակվեց որպես քաղաքական գովազդ և թաքնված քարոզ: Հարկ ենք համարում նշել, որ կատակերգությունը արտացոլում է նախկինում պառակտված Ուկրաինան, որը Զելենսկու մարմնավորած գլխավոր հերոսին հաջողվում է վերամիավորել խաղաղ ճանապարհով՝ տնտեսական «հրաշքի» միջոցով: Հույսը լավագույն վաճառվող ապրանքն է, որը հրամցնում են ընտրազանգվածին: Մարդիկ դիտում են ֆիլմը, հուզականությամբ մասնակցում ընտրությանը և ձայն են տալիս երկիրը միավորող ու խաղաղություն հաստատող վերացական կերպարին: Այս պարագայում հեռուստաէկրանի խեղկատակը, մարմնավորելով ժողովրդի համար ցանկալի ու հարազատ կերպար, հաջողության է հասնում իշխանության համար մրցավազքում:

Խեղկատակը կարևոր դերակատարում ունի նաև հաջորդ՝ սանկցիավորող (պատժամիջոցներ սահմանող) գործառույթում: «Պաշտոնականությունից» զուրկ կառնավալը բացասական էներգիան և սոցիալական բողոքը արտահայտելու լավագույն հարթակն է: Թատերաբեմում տեղի ունեցող բոլոր գործողությունները իշխանության դեմ ուղղված յուրօրինակ պատժամիջոցներ են. դրանք արտահայտվում են հայհոյանքի, նախատինքի, բողոքի այլ վերբալ ձևերի տեսքով՝ ի պատասխան իշխանությունների կողմից իրականացվող գործողությունների: Նույնը տեղի է ունենում սոցիալական մեդիահարթակում, որտեղ իշխանությանը քննադատելու գործիքակազմը ունի գրեթե նույն տեսքը: Առավել հաճախ մարդկանց վերաբերմունքը կառավարող վերնախավի նկատմամբ արտահայտվում է ծիծաղի, ծաղրի, նմանակումների, բացասական մեկնաբանությունների ու գրառումների տեսքով: Իսկ ինչո՞ւմն է ծաղրածուի դերակատարությունը այստեղ. հայտնվելով կառնավալային գործողությունների կենտրոնում՝ ուշադրություն է սևեռում իր կերպարի վրա՝

[6] Мария Захарова: Не понимаю, как мог украинский народ купиться на оранжевую чушь, на людей, которые выдают себя за украинцев, Комсомольская правда, 13.02.2020, https://www.kp.ru/radio/27091/4163560/ (այցելվել է 27.04.2020թ.)

դառնալով այն օբյեկտը, որի միջոցով, պարպելով բացասական էմոցիաներն ու ստանալով պատրանքային առավելություն հավասարը հավասարի նկատմամբ, հասարակությունը առժամանակ «մոռանում է» իր ագրեսիայի հիմնական թիրախը՝ իշխանությունը: Դիմակավորված իշխանությունը հասարակությանը հստակ ազդակներ է հաղորդում՝ ձգտելով ստանալ իր համար ցանկալի վիճակ; Անորոշությունների և հասարակական ցնցումների պարագայում որքան էպոտաժային է կերպարը, այդքան ավելի արագ է լինում հասնել ցանկալի արդյունքի[7]:

Կառնավալային տրամաբանության լավագույն օրինակը հեղափոխությունն է, որտեղ քաոսը ծնում է նոր կարգ, իսկ ավանդական համարվող հիերարխիան ու կառավարման համակարգը գահընկեց է արվում: Սակայն կառնավալային տրամաբանությամբ գործընթացը նաև լուրջ հոգեբանական հեղափոխություն է իրականացնում՝ թվացյալ առավելության և ամենաթողության պատրանքի ձևավորում, որը սակայն կառնավալի մասնակիցներին շատ արագ լքում է՝ առաջացնելով ագրեսիա, որն էլ պարպելու համար տեղի է ունենում հաջորդ հեղափոխությունը: Շարունակական անկայունությունները կանխելու համար իշխանությունը պետք է կարողանա ձևավորել ճիշտ դերախաղ: Ժողովուրդը կարող է ներել առաջնորդի դաժանությունը, բայց ոչ երբեք համառ անվճռականությունը և անկարողությունը: Վերոշարադրյալը պատկերացնելու համար դիտարկենք երեք կառավարիչների, հեղափոխությունների զոհերի, որոնք, չնայած տարբերություններին, ունեն նաև որոշակի ընդհանրություններ՝ առաքինի էին կամ առաքինի լինելու պատրանք էին ուզում ստեղծել, սիրում էին իրենց կանանց և գտնվում էին նրանց ազդեցության ներքո: Սկզբում ատելության թիրախ էին օտարազգի թագուհիները՝ անգլիացիները ատելությամբ էին լցված Կարլ Առաջինի կաթոլիկ ֆրանսուհի կնոջ հանդեպ, ֆրանսիացիները՝ Մարիա-Անտուանետայի, ռուսները, հատկապես պատերազմի տարիներին՝ Ալեքսանդրա Ֆեդորովայի նկատմամբ: Ժողովրդական գիտակցության մեջ լեգենդները ստանում էին անհերքելի փաստերի տեսք: Սադրանքների, մանիպուլյացիաների արդյունքում գեներացված ատելությունը փոխանցվում էր իշխանության մեկ օբյեկտից մյուսին՝ հրեշացնելով ողջ համակարգի կերպարը: Ճգնաժամային իրավիճակներում կառավարիչները նախաձեռնողականությունից ու վճռականությունից զուրկ էին, ինչի արդյունքում հեղափոխությունները անխուսափելի էին դառնում:

[7] Батай Ж., Проклятая часть. Сакральная социология. – М. Ладомир, 2006. – 366 с.

Անկայունությունը, որը հեղափոխականության ամենապարարտ հողն է, առաջնորդվում է նույն կառնավալային տրամաբանությամբ՝ բոլոր դերակատարներով ու առանձնահատկություններով: Ֆրանսիական հեղափոխությունը նույնպես սկսվել էր որպես կառնավալ. Դեմուլենի կոչով ամբոխը սկսեց գլուխները զարդարել թերթիկներով և համախմբվել Նեկերի ու Օռլեանի դուքսի կիսանդրիները տանող մարդկանց շուրջ: Կառնավալային տոնակատարությունը վերաճեց ընդվզման: Կառնավալային տրամաբանությունը շարունակող ամբոխը սկսեց զինվել ու Բաստիլի գրավումով ազդարարեց ժողովրդի հաղթանակը ամբողջատիրության նկատմամբ, սակայն պատմական փաստերի մանրակրկիտ դիտարկումը սույն իրադարձությունը զրկում է միֆականությունից: Իրականում Բաստիլը չի գրավվել, այլ հանձնվել է հեղափոխականներին՝ կյանքի իրավունքը պահպանելու դիմաց, սակայն ամրոց ներխուժած լյումպենը ոչնչացրեց ողջ ջոկատը: Կառնավալային ևս մեկ հետաքրքիր դրվագ՝ սպանված զինվորների արնահոսող գլուխները փայտերին հագցրած ամբոխը պարում ու շրջում էր Փարիզի փողոցներով: Սակայն արյունալի ու զարհուրելի այս իրադարձությունները անկարևոր դարձան ազատության հաղթանակի ֆոնին: Այս հաղթանակը ամրագրեց քաղաքացու ու մարդու մեծ հռչակագիրը: Սակայն հեղափոխականության կառնավալային տրամաբանության մեջ թաքնված էր ազատությունը ճնշելու վտանգը: ընդամենը չորս տարի անց Ռոբեսպիերը պարծենում էր «ազատության դեսպոտիզմ» (բռնատիրություն) բառակապակցությամբ, ինչը հասկանում ենք որպես ամենաթողության օրինականություն[8]:

«Բախտի քմահաճույքին մատնված զանգվածների համար կյանքի ծարավը անխուսափելիորեն հանգեցնում է կյանքի հիմքերի խարխլմանը»,- Խոսե Օրտեգա ի Գասետը այս կերպ է մեկնաբանում ամբոխի կառնավալային տրամադրության տրամաբանությունը[9]:

Ինչպես տեսանք՝ քաղաքականության թատերականացման ֆենոմենը նոր չէ, այլ դարերի խորքից եկող քաղաքական հաղորդակցության տեսակ: Պարզապես պալատական ծաղրածուներին, տոնավաճառային փոքրիկ թատերախմբերին և «ժողովրդի» կողմից ստեղծվող անեկդոտներին ու երգաքառյակներին եկել են փոխարինելու քաղաքական երգիծական հաղորդումները, վիրուսային տեսահոլովակները, շարքային քաղաքացիների նկատմամբ դրվագային հոգածության տիրաժավորվող պատմությունները և «ժողովրդի ծոցից» ելած առցանց

[8] Карлейль Т., Французская революция. История. – М., 1991. – С.129.
[9] Ортега-и-Гассет Х., Восстание масс. – М., 2003. – С.53.

ֆրիկ (անձ, ով առանձնանում է վառ, արտասովոր, էքստրավագանտ արտաքինով ու էպոտաժ վարքով)[10] շոուները:

[10] Meaning of freak in English, https://dictionary.cambridge.org/dictionary/english/freak

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*